ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.13. Կենտրոնական Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Կենտրոնական Ասիան աչքի է ընկնում ռելիեֆի բազմազանությամբ: Կենտրոնական, արևմտյան, հյուսիսային շրջանները հարթավայրային են: Խոշորը Թուրանի դաշտավայրն է: Հարավում և հարավարևելքում բարձր լեռնային համակարգեր են՝ **Պամիրը** (Ալպյան լեռնակազմություն)՝ **Կոնգուր** բարձր գագաթով՝ 7649մ և **Տյան Շանը** (մեզոզոյան լեռնակազմություն), որոնցում հաճախակի են ուժգին երկրաշարժերը, օրինակ՝ Տաշքենդի՝ 1966թ: Ամենացածր կետը Թուրանի հարթավայրում գտնվող **Կարագիե իջվածքն** է՝ –132մ:

Տարածաշրջանի կլիման բնորոշվում է խիստ ցամաքայնությամբ: Ձմեռը ցուրտ է և սակավաձյուն, ամառը՝ չափազանց շոգ ու չորային: Հունվարյան ջերմաստիճանը կարող է նվազել մինչև –40^{0}C, իսկ ամռանը հասնել 50^{0}C–ի: Տարածաշրջանի մեծ մասում մթնոլորտային տեղումների տարեկան քանակը չի անցնում 100մմ–ից, իսկ լեռնային շրջանները տեղումնառատ են:

• • •

Ղազախստանի հարավում նշանավոր է **Բալխաշ** անհոսք լիճը, որի մեջ թափվում է բավականին ջրառատ **Իլի** գետը: Լճի ջուրը հետաքրքիր քիմիական կազմ ունի, արևմտյան մասը քաղցրահամ է, իսկ արևելյանը՝ աղի: Ղրղզստանի հյուսիսային մասում **Իսսիկ Կուլ** լեռնային լիճն է, որը քաղցրահամ ջրի շտեմարան է: Նրա ափերը կարող են դառնալ հանգստի շրջաններ: Տարածաշրջանում գտնվող մնացորդային ծագման **Արալյան** լճի մակերեսը վերջին հարյուրամյակի ընթացքում շեշտակի նվազել է (ինչու՞) և այսօր լիճը վերածվել է բազմաթիվ ծանծաղ լճակների:

Տարածաշրջանի հյուսիսում և հյուսիսարևելքում տարածված են անծայրածիր սևահողային տափաստաններ, ինչի շնորհիվ Ղազախստանը դարձել է հացահատիկի շտեմարան երկիր՝ տարեկան արտադրելով 15 մլն. տ. ցորեն:

• • •

Այստեղ ապրում են ռուսներ, գերմանացիներ (բռնի գաղթած), հայեր և քրիստոնյա այլ ազգերի ներկայացուցիչներ: Նրանք աշխատում են արդյունաբերության մեջ, իսկ 1950–ական թվականներից սկսած նաև խոպան հողերի յուրացման շրջաններում՝ կենտրոնական և հյուսիսային Ղազախստան:

Կենտրոնական Ասիան աշխարհի նոսր բնակեցված շրջաններից է: Բնակչության միջին խտությունը ավելի քան 20 մարդ քառ. կմ է: Համեմատաբար խիտ են բնակեցված հին երկրագործական շրջանները, որոնք աշխարհի խտաբնակ շրջաններից են: Միջին խտությունը այստեղ հասնում է 500 մարդ. քառ. կմ: Անապատային և լեռնային շրջանները չափազանց նոսր են բնակեցված, որտեղ միջին խտությունը 2 մարդ է 10 քառ. կմ –ի վրա:

Կենտրոնական Ասիայում ուրբանացման մակարդակը շուրջ 44% է, որը ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից (համեմատեք արդեն ուսումնասիրված երկրների հետ՝ ձեր ընտրությամբ): Այն համեմատաբար բարձր է Ղազախստանում, իսկ ամենացածրը՝ Տաջիկստանում է: Ուրբանացման գործընթացը հատկապես արագ է աճում Ուզբեկստանում, ինչը պայմանավորված է վերջին տասնամյակում մի շարք խոշոր բնակավայրերի՝ քաղաքի կարգավիճակ շնորհելու հանգամանքով: Տարածաշրջանում շատ են 100 հազար և ավելի բնակչությամբ քաղաքները, որոնց թիվն անցնում է 50–ից, իսկ 1մլն և ավել բնակիչ ունեն 7 քաղաքներ՝ մայրաքաղաքները, Ղազախստանի նախկին մայրաքաղաք **Ալմաթին** և **Շիմքենդը**: Ամենախոշոր քաղաքը **Տաշքենդն** է, ավելի քան 3մլն բնակչությամբ:

• • •

Բնակչությունը: Տարածաշրջանում ապրում է ավելի քան 80 մլն մարդ: Դրանք տարբեր ժամանակներում ձևավորված տարբեր ազգություններ են ներկայացնում: Կենտրոնական Ասիայի հին երկրագործական շրջաններում՝ Ֆերգանայի, Չիրչիկի հովիտներ, Սիրդարյայի ստորին հոսանք, ապրել են նստակյաց կյանքով, իսկ հյուսիսի ու արևմուտքի չորային կլիմա ունեցող տարածքներում ապրել են քոչվոր ցեղեր, որոնք աստիճանաբար ձուլվել են նաև քոչվոր թուրք–սելջուկների հետ:

• • •

Տարածաշրջանում բնակչության բնական աճի ցուցանիշը բարձր է, միջի–

նը՝ 1,8%: Այն համեմատաբար բարձր է Տաջիկստանում, Թուրքմենստանում, ցածր է՝ Ղազախստանում (ինչու՞):

Կենտրոնական Ասիայում ուրբանացման մակարդակը շուրջ 44% է, որը ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից:

• • •

Լճերը հսկայական կենսական նշանակություն ունեն. օրինակ՝ Կասպիցը Ղազախստանի և Թուրքմենստանի համար ոչ միայն հանքային ու օրգանական հարստությունների շտեմարան է, այլև էժան տրանսպորտային ուղի է հարևան երկրների հետ կապ հաստատելու համար:

Հարավ-արևմուտքում, կենտրոնում և արևելքում, որտեղ տեղումների քանակը չի անցնում 100 մմ-ից, տարածված են ավազային, կավային, քարային անապատներ և կիսաանապատներ:

• • •

Անապատներում տրանսպորտի գլխավոր միջոցը ուղտն է՝ «անապատի նավը»: Ռելիեֆի ձևերից բնորոշ են մինչև 200 մ հարաբերական բարձրություն ունեցող ավազաթմբերը՝ **բարխանները:** Բուսականությունը աղքատ է, խոր գնացող արմատային համակարգով (ինչու՞), փշերով և կոշտ տերևներով, վեգետացիոն (աճման) կարճ շրջանով:

Կենտրոնական Ասիան հարուստ է բազմատեսակ օգտակար հանածոներով: **Մանղշլաղ** թերակղզում, **Էմբայի** ավազանում՝ նավթի և գազի հարուստ պաշարներ (**Թենգիզ** հանքավայր), Ղազախստանում (**Կարագանդա**, **Էքիբաստուզ)**, ինչպես նաև Ղրղզստանում՝ քարածխի պաշարներ: Հարուստ է պղնձի (**Բալխաշ**), երկաթաքարի, ոսկու (Ուզբեկստան՝ աշխարհի պաշարների շուրջ 10%-ը), կապարի և ցինկի (Արևելյան Ղազախստան), քիմիական հումքով՝ **գլաուբերյան աղ՝ Կարա Բողազ գյոլ** ծովածոցը (Թուրքմենստան), ծծումբով (Թուրքմենստան), ֆոսֆորիտով (Ղազախստան) և այլն:

• • •

Տնտեսությունը: Կենտրոնական Ասիայի պետությունները նախկին ԽՍՀՄ միութենական հանրապետություններ են: Ընդհանուր առմամբ դրանք անցումային տնտեսություն ունեցող երկրներ են: Բնորոշ են հանքային հումքի արդյունահանումն ու վերամշակումը, գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու վերամշակումը: Տնտեսության զարգացման մակարդակը համեմատաբար բարձր է Ղազախստանում և Ուզբեկստանում: